

ԱՆԴՐԵԱՍԻ ԵՐԿՈՒՀԱՐՅՈՒՐԱՄՅԱ ԶԱՏԿԱՑՈՒՅՑԻ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

ՀՍՍՀ ԳԱ րզրակից անդամ է. Բ. ԱՂԱՅՍՆ

Մեր «նախամաշտոցյան հայ գրի ու գրականության, մեսրոպյան այրու-
բենի և հարակից հարցերի մասին» աշխատության մեջ անդրադարձել ենք
Անդրեաս Բյուզանդացու զատկացույցի հայերեն թարգմանության ժամանա-
կին և, հենվելով բնադրում եղած տվյալների վրա, պարզել, որ թարգմանու-
թյունը կատարվել է V դարի առաջին կեսում: Նույն տեղում մենք քննության
ենք առել նաև այդ բնագիրը հրատարակող Ա. Աբրահամյանի այն կարծիքը,
թե իբրև Անդրեասի աշխատությունը հայերեն է թարգմանվել IV դարում:

Հիշյալ աշխատության մեջ ցույց ենք տվել, որ «Պատմա-բանասիրական
հանդեսի» 1976 թ. № 2-ում տպագրված իր հոդվածում և 1978 թ. հրատա-
րված իր «Հայոց գիր և գրչություն» գրքում Ա. Աբրահամյանն աղավաղ-
ված է ներկայացրել Անդրեասի բնագրի այն հատվածը, որի վրա հենվելով
գտնում է, թե այդ աշխատության թարգմանությունը կատարվել է IV դարում:

«Պատմա-բանասիրական հանդեսի» սույն համարում տպագրած «Անդ-
րեաս Բյուզանդացու տոնացույցի թարգմանության ժամանակը»¹ բանավի-
ճական իր հոդվածում Ա. Աբրահամյանը մեր ցույց տված աղճատումները
համարում է «շնչին վրիպակներ»: Փորձենք կողք-կողքի դնել այդ հատ-
վածները.

Անդրեասի բնագիրը

Արդ՝ սկիզբն հասարակելոյ տուրն-
ջեան և գիշերոյ ըստ թուոյ եղիպ-
տացւոցն ի Ի և ի Դ ամսոյն լինի, որ
անուանեալ կոչի պեմենովթ, որ գայ
կշոի ըստ թուոյն Անդիոբացւոց ի
Ի-երորդում դիւստրոս ամսոյն, այ-
սինքն՝ մեհեկանի...²

Աբրահամյանի հրապարակումը

Արդ՝ Սկիզբն հասարակելո տուրն-
ջեան և գիշերոյ ըստ թուոց Եղիպտա-
ցոցն ի ԻԴ և Դ ամսոյն լինի, որ ա-
նուանեալ կոչի պեմենովթ, որ գայ
կշոի ըստ թուոյն Անդիոբացւոց ի ԻԵ-
րորդում դիւստրոս ամսոյն, այսինքն՝
մեհեկանի...³

Երկու հատվածների փոքր-ինչ ուշադիր համեմատությունը բավական
է, որպեսզի հայտնի դառնան դրանց միջև եղած անհամապատասխանու-
թյունները.

1. Անդրեասի մոտ՝ ի Ի և ի Դ ամսոյն.— Աբրահամյանը դարձրել է
ի ԻԴ, այսինքն՝ Ի-ի մոտ ավելացրել է մի Դ, որպեսզի ստանա 24:

¹ Ա. Աբրահամյանի այս հոդվածից կատարվող մեջբերումների լջերը նշելու ենք տեքստում,
փակագծերի մեջ:

² Բնագիտության և տեխնիկայի պատմությունը Հայաստանում, ժողովածու, № 4, 1967,
էջ 78 (մեր հոդվածի մեջ նշանակելու ենք ԲՏՊ):

³ Ա. Աբրահամյան, Անդրեասի տոմարագիտական աշխատությունները, ԲՏՊ, 72:

2. Վերացրել է ի նախդիրը «և ի Դ ամսոյն» կասկածներով, որ պետքի նախորդ ի Խ-ի հետ կապված Դ-ն անշատի և հատկացնի ամսոյն բառին, որով ստացել է շորորոդ ամսոյն. դրանով Անդրեասի գրածը՝ «24-ին այն ամսի, որ կոչվում է պեմենովթ», դարձել է՝ «24-ին շորորոդ ամսի, որ կոչվում է պեմենովթ» (պեմենովթը դարձել է շորորոդ ամիս, մինչդեռ եզիպտական տարվա յոթերորդ ամիսն է)։

3. Անդրեասի «ի Խ-նորդումն դիստրոս ամսոյն» դարձրել է «Ին-րորդում», որով դյուստրոսի 20-ը դարձել է դյուստրոսի 25։

Ա. Աբրահամյանը, փոխանակ տուգելու մեր նշած աղճատումները և ճշտելու դրանք, այնպես է ներկայացնում, թե իբր դրանք չնչին վրիպակներ են և նշում է, թե «առաջաբանում ճիշտ ձևով է», «առաջաբանում ճիշտ է հաշված» և այլն։ Բայց պատկերը նույնն է նաև առաջաբանում։ Բերենք այդ հաշվումները.

«Հայկական շարժական տոմարով մեհեկանը 381 թվականից հետո հռոմեական մարտ ամսին ղուգավորվել չէր կարող։ Ուրեմն, կարելի է ասել, որ մատնացույց արված ղուգավորությունը կարող էր վերաբերել մեհեկանի 24-ից (նկատի ունենալով, որ 353 թվականին գիշերահավասարը եղել է մեհեկանի 24-ին) մինչև 381 թվականը, երբ գիշերահավասարը եղել է մեհեկանի ամսի վերջին օրը՝ 30-ին» (ԲՏՊ, № 4, էջ 72)։

1. Մեհեկանը կարող էր համընկնել մարտին նաև ավելի ուշ. օր. Մեհեկանի 30-ը = մարտի 10-ին՝ 420—423 թթ., իսկ սա արդեն V դարն է։

2. Պետք է լինի՝ մեհեկանի 23-ից։

3. 353 թ. գիշերահավասարը եղել է մեհեկանի 23-ին։

4. «Մինչև 381 թ.», պետք է լինի՝ մինչև 383 (մեհեկանի 30 = մարտի 20-ին՝ 380—383 թթ.)։

Ինչպես տեսնում ենք, երկու նախադասության մեջ շորոս հաշվում կա, շորոսն էլ՝ սխալ։

Ա. Աբրահամյանը փորձ է անում «սխալներ» գտնել մեր գրքում և առաջարկում է իր ուղղումները։ Բերենք մի օրինակ. մեր գրքում առաջ ենք բաշում այն ենթադրությունը, թե իբր հայերը դիմել են Անդրեասին՝ իրենց համար ևս տոնացույց կազմելու, և գրել ենք. «ենթադրենք, թե նրանք (հայերը) դիմել են 381 թվականին, երբ պեմենովթի 24-ին համընկնում էր մեհեկանի 30-ը»։ Աբրահամյանն այդ առթիվ գրում է. «Մեհեկանի 30-ը պեմենովթի 24-ի հետ ղուգադրվող համապատասխան տարեթվերից սկզբինը կլինի 380-ը, իսկ վերջինը՝ 383-ը»։ Բայց այդ շորոս տարիներից մեղ հետաքրքրում է միայն 381-ը, երբ, մեր ենթադրությամբ, իբրև թե հայերը դիմել են Անդրեասին։ Փորձենք, սակայն, ընդունել Աբրահամյանի դիտողությունը և տեսնենք, թե ինչ կստացվի. «ենթադրենք, թե (հայերը Անդրեասին) դիմեցին 381 թվականին, երբ մեհեկանի 30-ը պեմենովթի 24-ի հետ ղուգադրվող տարեթվերից սկզբինը կլինի 380-ը, իսկ վերջինը՝ 383-ը». ի՞նչ դուրս եկավ։

Աբրահամյանը կատարում է և այլ կարգի ուղղումներ.

1. Մեջբերում մեր գրքից. «Մենք արդեն ասացինք, որ 384 թվականին հռոմեական մարտի 20-ը համընկել է արեգի 2-ին»։ Աբրահամյանը դիտողություն է անում. «Մարտի 20-ը արեգի 1-ի հետ կարող էր համընկնել 384—387 թթ. (188)։ Բայց երբ ասվում է «մենք արդեն ասացինք», նշանակում է, թե դրանից առաջ այդ մասին խոսք է եղել և մենք գրել ենք՝

«384—387 թվականներ»։ Բայց եթե այդ էլ գրած չլինեինք, դարձյալ չէր կարելի ասել, թե «384 թվականին հռոմեական մարտի 20-ը համընկել է արեգի 1-ին, որը կարող էր համընկնել հռոմեական մարտի 20-ին 384—387 թվականներին», քանի որ մեզ հետաքրքրում է միայն 384 թվականը։ Սակաւն այստեղ կարևոր է նաև մի այլ բան. մենք գրել ենք՝ «Մարտի 20-ը համընկել է արեգի 1-ին» (էջ 139), իսկ նա իր մեջբերման մեջ արեգի 1-ը դարձրել է արեգի 2-ը։

2. Մենք գրում ենք. «... իսկ 452 թվականին՝ մարտի 3-ին, այսինքն՝ առեգի վերջին օրն է համընկել ապրիլի մեկին»։ Աբրահամյանը նկատում է. «Արեգի վերջին օրը համընկել է ոչ թե միայն 452-ի, այլ 452—455 թթ. հետ» (188)։ Բայց արեգի վերջին օրը չի կարող համընկնել ո՛չ 452, ո՛չ էլ 452—455 թվականների հետ. արեգի վերջին օրը մեկ օր է, իսկ 452, 453, 454, 455 թվականները՝ տարիներ. օրը չի կարող համընկնել տարիների հետ։ Ինչ վերաբերում է արեգի վերջին օրվա և ապրիլի 1-ի համընկնելուն, ապա մեզ հետաքրքրում է միայն 452 թվականը։ Բայց կարևորը այլ բան է. «452—455 թվականների հետ»-ին նա ավելացնում է. «Իսկ թե ի՞նչ իմաստով է բերված նախադասության մեջ «մարտի 3-ին», այդ մեզ համար մնաց անհասկանալի։ Բոլոր դեպքերում արեգի վերջին օրը չի կարող միաժամանակ համընկնել ո՛չ մարտի 3-ի և ո՛չ էլ ապրիլի 1-ի հետ» (188)։ Անհասկանալի ոչինչ չէր լինի, եթե Աբրահամյանը չդիմեր գիտական բանավեճում անթույլատրելի մի հնարանքի՝ մեջբերումը կրճատել այնպես, որ գրվածը չհասկացվի։

Աղայան

Աբրահամյանի մեջբերումը

«Հարց է առաջանում. ո՞ր թվականներին ապրիլի 1-ը կարող էր համընկնել հայոց շարժական տոմարի արեգ ամսվա որևէ օրվա հետ. 336—339 թվականներին արեգի 1-ը եղել է ապրիլի 1-ին, իսկ 452 թվականին՝ մարտի 3-ին, այսինքն՝ արեգի վերջին օրն է համընկել ապրիլի 1-ին»։

«Իսկ 452 թվականին՝ մարտի 3-ին (sic), այսինքն՝ արեգի վերջին օրն է համընկել ապրիլի մեկին»։

Աբրահամյանը դեն է ձգել նախադասության առաջին մասը՝ «336—339 թվականներին հայոց շարժական տոմարի արեգ ամսվա 1-ը եղել է ապրիլի 1-ին» և պահել միայն վերջին մասը, որով առաջացել է անհասկանալիության պատրանք։ Բացատրենք մեր գրածը, որ ինքնին պարզ է.

Ա. 336—339 թթ. արեգի 1-ը եղել է ապրիլի 1-ին. սա նշանակում է, որ 336—339 քառամյակում արեգի 1-ը և ապրիլի 1-ը համընկել կամ զուգադիպել են միմյանց։

Բ. «Իսկ 452 թվականին՝ մարտի 3-ին». այստեղ «թվականին» բառի վրա բուժ է դրվել, իբրև նշան բաց թողնված (զեղչված) բառերի։ Եթե վերականգնենք զեղչված բառերը, կստացվի այսպես. «Իսկ 452 թվականին արեգի 1-ը եղել է մարտի 3-ին» և իրոք, 452 թվականին արեգի 1-ը համընկել է մարտի 3-ին։

Գ. «Այսինքն՝ արեգի վերջին օրն է համընկել ապրիլի 1-ին». սա նշանակում է, որ եթե 336 թվականին արեգի 1-ն է համընկել ապրիլի 1-ին,

ապա 452 թվականին արեգի վերջին օրն է համընկել ապրիլի 1-ին, որովհետև նույն 452 թվականին արեգի 1-ը համընկել է արդեն մարտի 3-ին (մարտի 3-ից մինչև մարտի 31-ը անում է 29 օր, որին եթե դումարենք ապրիլի 1-ը, կստանանք 30 օր, այսինքն՝ արեգի 30-ը)։ Այսպիսով, ոչ թե արեգի վերջին օրն է համընկել մարտի 3-ին, այլ արեգի 1-ը, իսկ արեգի վերջին օրը՝ ապրիլի 1-ին։

3. «... Կարող ենք ասել, որ տարվա սկիզբը (մարտի 19+13) կարող էր արեգին, թեկուղ և նրա վերջին օրվան համընկնել 353—452 թվականների ընթացքում»,— ասված է մեր գրքում։ Աբրահամյանը փորձում է ուղղել. «է. Աղայանի նկատի ունեցած տարվա սկիզբը արեգի վերջին օրվա հետ համընկել է ոչ թե 352, այլ՝ 553 թ.» (188)։ Ի՞նչ ենք գրել մենք. այն, որ տարվա սկիզբին (մարտի 19-ին) գումարած 13 օր=ապրիլի 1, ըստ ուրում մեր գրքում պարզ կերպով բացատրված է, թե դրանք ինչ թվեր են. տարվա սկիզբը, ըստ Անդրեասի տեքստի, համարվում է մարտի 19-ը, որին դումարելով 13 օր, հանգում ենք ապրիլի 1-ին, իսկ որ ապրիլի 1-ին համընկել է արեգի 1-ը՝ 336—339 թթ., իսկ նույն ապրիլի 1-ին՝ արեգի 30-ը 452—455 թթ., այդ մենք արդեն տեսանք։ Պարզ է, որ մենք ոչ մի տարվա սկիզբ էլ նկատի չենք ունեցել, այլ այն, որ՝ թարգմանության մեջ նշված տարվա սկիզբին, այսինքն՝ մարտի 19-ին, գումարած 13՝ հավասար է ապրիլի 1։ Ահա բոլորը. և ոչ մի կարիք չկա մեզ այլ բաներ վերագրելու։

Մենք գրել ենք. «Հայերը նրան դիմեցին, ասենք, 360 թվականին, երբ պեմենովթի 24-ին (մարտի 20-ին) համապատասխանում էր մեհեկանի 26-ը»։ Ա. Աբրահամյանը, բերելով այս տողերը, գրում է. «Այստեղ երկու սխալ է թույլ տրված. նախ մեհեկանը կհամապատասխանի ոչ թե մեկ՝ 360 թ., այլ երեք այլ տարիների, ապա՝ պեմենովթի 24-ը մեհեկանի 26-ի հետ համընկած տարիները կլինեն 364—367 թթ. (187—188)»։

Առաջինի կապակցությամբ ասենք, որ մեհեկանը չի կարող համապատասխանել ո՛չ «մեկ՝ 360 թ.», ո՛չ «երեք այլ տարիների», և ո՛չ էլ, առհասարակ, որևէ տարվա։ Մեհեկանը ամիս է, իսկ ամիսը չի կարող համապատասխանել տարվա, այն էլ՝ երեք տարիների։

«Պեմենովթի 24-ը մեհեկանի 26-ի հետ համընկած տարիները կլինեն 364—367 թթ.» (ճիշտ է), բայց մեզ հետաքրքրել է միայն 360 թ., ի՞նչ գործ ունեն այդտեղ 364—367 թթ.։

«Միայն V դարում է, որ հայկական շարժական տոմարով գիշերահավասարը տեղի է ունեցել արեգ ամսին»,— գրում է Աբրահամյանը⁴։ Գիշերահավասարը հայկական արեգ ամսին է եղել 384—507 թթ. ընթացքում և ոչ թե «միայն V դարում»։

«Բայց հայտնի է, — գրում է Աբրահամյանը, — որ գիշերահավասարը դատկի հետ չի կարող զուգադրվել և համընկնել» (189)։ Դուրս է գալիս, որ մենք, իբր թե գրել ենք, որ գիշերահավասարը համընկնում է դատկին։ Դիմենք փաստերին։ Մեր գրքի մեջ մենք ոչ մի տեղ չենք զբաղվել այն հարցով, թե ե՞րբ է լինում դատկի տոնը, կարո՞ղ են դատկի օրն ու գիշերահավասարը զուգադրվել, այսինքն՝ միևնույն օրը լինել, թե ոչ։ Դա մեզ չի հետաքրքրել։ Ավելին, մեր աշխատության 122—145 էջերում (Անդրեասի

⁴ ԲՏՊ, № 4, էջ 73։

տոնացուցին նվիրված հատվածում) զատիկ բաւը գործածվել է միայն Անդրեասի աշխատութիւնից կատարված մեջբերումներում և, ընկանաբար, չակերտների մեջ, ուստի և Ա. Աբրահամյանի գրածը ճիշտ չէ: Աբրահամյանը մեր գրքից բերում է երեք նախադասութիւն՝ առաջինը 141-րդ էջից, երկրորդը՝ 142-րդ էջից և երրորդը՝ դարձյալ 141-րդ էջից՝ որով խախտվում է մտքերի տրամաբանութիւնը: Մեր գրքի 142-րդ էջում գրված է. «Ո՞ր թվականներին և՛ գիշերահավասարը, և՛ «Քրիստոսի շարշարանաց օրը» կարող էին լինել հայոց շարժական տոմարի արեգ ամսին»: Այս հարցադրումը և Անդրեասից բերված քաղվածքը դեն ձգելով, նա բերել է միայն դրանց հաջորդող նախադասութիւնը. «Սա նշանակում է, թե գիշերահավասարի և «շարշարանաց օրվա» զուգահիւյթյան սկիզբը կարող էր լինել...» և այլն: Նախորդ հարցադրումից կտրված այս նախադասութիւնից իսկապես կարելի է այն տպավորութիւնն ստանալ, թե մենք խոսում ենք գիշերահավասարի և «շարշարանաց օրվա» համընկնելու մասին, մինչդեռ հարցադրումը վերաբերում է այդ երկուսի՝ արեգ ամսին լինելուն:

Մեզ չի հետաքրքրել «շարշարանաց օրվա» և գիշերահավասարի զուգահիւյթյան հարցը, ուստի և դրան չենք անդրադարձել: Սակայն եթե անդրադառնայինք այդ հարցին, կասեինք, որ զարնանային գիշերահավասարը և «շարշարանաց օրը» կարող են համընկնել, այսինքն՝ միևնույն օրը լինել: Զատիկի օրը տատանվում է մարտի 22—ապրիլի 25 (ներառյալ) օրերի միջև, որ նշանակում է, թե զատիկը կարող է լինել մարտի 22-ին, 23-ին, 24-ին, ... ապրիլի 24-ին, 25-ին: Աբրահամյանը գրում է, որ «շարշարանաց օրը կապված է զատիկի տոնի հետ և տեղի է ունենում նրանից երկու օր առաջ ավագ ուրբաթ օրը» (190): Ինքնին հասկանալի է, որ եթե զատիկը լինի մարտի 22-ին, «շարշարանաց օրն» էլ կլինի մարտի 20-ին (որովհետև մարտի 22-ից հանած 2 օր՝ հավասար է մարտի 20!) և կզուգահիւյթի գիշերահավասարի օրվան, քանի որ, ինչպես նշում է Ա. Աբրահամյանը, «գիշերահավասարը անշարժ լինում է մարտի 20-ին» (189): Այստեղից բխում է, որ «շարշարանաց օրվա» և զարնանային գիշերահավասարի զուգահիւյթյունը միանգամայն հնարավոր է: Ըստ Աբրահամյանի գրածի «շարշարանաց օրը» տեղի է ունենում ավագ ուրբաթ օրը, բայց դա ճիշտ չէ. «շարշարանաց օրը» զարնանային նորալուսնի 14-րդ օրն է, որը կարող է համընկնել նաև երկուշաբթի, չորեքշաբթի, շաբաթ օրերի հետ: Այսպես, օրինակ, 353 թ. «շարշարանաց օրը» եղել է ապրիլի 3-ին (շաբաթ օր), իսկ ավագ ուրբաթ օրը՝ ապրիլի 9-ին (զատիկը՝ ապրիլի 11-ին): Այս նկատի ունենալով էլ մենք գրեցինք՝ «հնարավոր» է, բայց իրականում գիշերահավասարը և «շարշարանաց օրը» կարող են միևնույն օրը լինել այն բոլոր տարիներին, եւթ զատիկը լինում է մարտի 22-ին, եթե լուսնի 14-ը համընկնում է ուրբաթ օրվան:

Բայց դա չի նշանակում, որ մենք գրել ենք, թե գիշերահավասարը և «շարշարանաց օրը» միշտ իրար հետ լինում են արեգ ամսին: Մեր հարցադրումը հետևյալն է. «Որ թվականներին և՛ գիշերահավասարը, և՛ «Քրիստոսի շարշարանաց օրը» կարող էին լինել հայոց շարժական տոմարի արեգ ամսին»: Այս հարցադրման մեջ մենք «կարող էին» բառերը պատահականորեն չենք գործածել, այլ այն պատճառով, որ դրա պատասխանը ցույց է տալիս միայն հնարավորութիւնը և ոչ թե պարտադիր իրողութիւնը: Մեր հաշվումների համաձայն այդ հնարավորութիւնը կարող էր լինել 384—

455 թթ. ընթացքում, բայց դա չի նշանակում, թե այդ ժամանակամիջոցի բոլոր ֆարիսերին էլ այդպես պետք է լիներ։ Հասկանալի է, ուրեմն, որ սահմանելով գիշերահավասարը և «չարչարանաց օրը» արեգ ամսին լինելու ժամանակամիջոցը, մեր նպատակն է եղել հաստատել, որ այդպիսի դուգապիպություն չէր կարող լինել 384 թ. առաջ և 455 թ. հետո, ուստի և թարգմանությունն էլ կարող է կատարված լինել 384 թ. ոչ շուտ և 455 թ. ոչ ուշ։

Իր հոգվածի 3-րդ հատվածում Ա. Աբրահամյանը կրկին անդրադառնում է չարչարանաց օրվան։ Բերելով մեր գրքից մի քաղվածք, նա 189-րդ էջում գրում է. «Փակագծի մեջ վերցված թվանշաններից մարտի 19-ը է. Աղայանի կարծիքով ԹԺ-երորդն է (կարծիքն այստեղ գործ չունի. ԹԺ-երորդը 19-րդ է— է. Ա.), որին գումարելով 13 թիվը, ունենում է ապրիլի 1-ը։ Բայց ի՞նչ թիվ է նրան գումարված 13-ը՝ մենք դժվարացանք պարզել։ Հաղիվ թե նա շփոթած լինի հուլյան և գրիգորյան տոմարների միջև ներկա ժամանակում եղած 13 օրերի տարբերությունը։ Սա ամենայն հավանականությամբ, վրիպակ է ԴԺ-աներորդի (14-ի) (բայց ԴԺ-աներորդը 14 չէ, այլ 14-րդ— է. Ա.), ինչպես հաշվել է մի այլ անգամ. «...ըստ Անդրեասի տարվա առաջին ամսվա 1-ր մարտի 19-ն է, ապա 14-րդ օրը կլինի ապրիլի մեկը»։

Համապատասխան տեղում (էջ 139) մենք նման բան չենք ասել։ Ահա մեր գրածը. «Քանի որ, ըստ Անդրեասի, տարվա առաջին ամսվա 1-ը մարտի 19-ն է, ապա 14-րդ օրը կլինի ապրիլի 1-ը»։ Այս նախադասությունը մեջ բերելուց հետո նա գրում է. «Բայց 19-ին գումարելով 14, ապրիլի մեկ չեն ստանա»։ Ստիպված ենք նորից անդրադառնալու այդ հարցին։ Անդրեասի տեքստում ասվում է. ա. առաջին ամսվա 14-րդ օրը Քրիստոսը չարչարվեց, բ. տարվա սկիզբը լինում է մարտի 19-ին։ Այս երկու թվերի հիման վրա որոշել ենք, թե «առաջին ամսվա» 14-րդ օրը հռոմեական տոմարի ո՞ր ամսվա ո՞ր օրը կլինի։ Եթե տարվա առաջին ամսվա առաջին օրը համընկնի մարտի 19-ին, ապա 14-րդ օրը կլինի ապրիլի 1-ը։ Այսպես՝ մարտի 19-ը՝ 1-ին օր, մարտի 20-ը՝ 2-րդ օր, 21-ը՝ 3-րդ օր... մարտի 30-ը՝ 12-րդ օր, 31-ը՝ 13-րդ օր, ապրիլի 1-ը՝ 14-րդ օր։ Հասկանալի է, որ մեր 13-ը բոլորովին ուրիշ թիվ է, և ոչ թե հին ու նոր տոմարների ներկայիս տարբերությունը։

Իր հոգվածի չորրորդ հատվածը Ա. Աբրահամյանը նվիրել է մեր հաշվումների համար որպես կարևոր տվյալներ օգտագործված «ԴԺ-աներորդ» և «ԹԺ-աներորդ» (14-րդ և 19-րդ) թվերին։ «Է. Աղայանը,— գրում է նա,— հիմք է ունեցել Անդրեասի բնագրի հետևյալ տեղեկությունը. «Քրիստոս ԴԺ-աներորդ աւուր ամսոյն առաջնոյ չարչարեցաւ»։ Նա ոչ մի բացատրություն չի տվել, թե ո՞ր ժողովրդի ամսաթիվ է այդ «ԴԺ-աներորդը» և ի՞նչ անուն ունի այն։ Անանուն այդ ամիսը նա գործ է ածել իբրև տարվա առաջին ամսվա 14-րդ օրը» (190—191)։ Այսպես, ահա, կոնտրաստից կտրելով մեկ նախադասություն և մեկ բառակապակցություն, նա գրում է. «Է. Աղայանը, ինչպես երևում է, չի կարողացել պարզել տարվա և ամսվա անունը և ամեն տեսակի անախորժությունից աղպտ մնալու համար, թողել է նրան անայտություն մեջ» (191)։ Փորձենք իր՝ Ա. Աբրահամյանի գրածով իսկ հերքել իրեն. «Է. Աղայանը հիմք է ունեցել Անդրեասի բնագրի հետևյալ տեղեկությունը. «Քրիստոս ԴԺ-աներորդ աւուր ամսոյն առաջնոյ չարչարեցաւ» (190)։ Այս մեղքերումից նախ պարզվում է, որ Ա. Աբրահամյանի ասածը, թե իբր «անա-

նուն այդ ամիսը նա (այսինքն մենք — է. Ա.) գործ է ածել իբրև տարվա առաջին ամսվա 14-րդ օրը» (190—191) հորինված է. «տարվա առաջին ամսվա 14-րդ օրը» բառակապակցությունը մեր գրածը չէ, այլ Անդրեասինը։ Նրկրորդ՝ Անդրեասի տեղեկության մեջ նշվող «տարվա առաջին ամսվա առաջին օրը» բոլորովին անանուն չէ, այլ հենց նույն Անդրեասի խոսքերով՝ «մարտ ամսի 19-ը»։ Ահա թե ինչ է գրում Անդրեասը. «Սկիզբն ամենայն տարւոյն յԹԺ-երորդի մարտի ամսոյ լինի»։ Երրորդ՝ Աղայանը ամիսը չի նույնացնում օրվա հետ, ինչպես անում է Աբրահամյանը. «անանուն այդ ամիսը նա գործ է ածել իբրև տարվա առաջին ամսվա 14-րդ օրը»։ Ամիսը չի կարող ոչ 14, ոչ 15 և ոչ էլ որևէ օր լինել. ամիսը ամիս է և ունի 30 կամ 31 կամ 28 օր, իսկ 14-րդ օրը մեկ օր է, ուստի և մենք չենք կարող «անանուն ամիսը» համարել 14-րդ օր։

Ա. Աբրահամյանը շարունակում է. «է. Աղայանն անորոշ է թողել նաև այն հարցը, թե «աւուր առաջնոյ» ասելով ո՞ր թվականի առաջին տարին է նկատի ունեցվել՝ հռոմեական հունվարը, եգիպտական թո՞վթը, անտիոքյան դիո՞սը, հայկական նավասարդը կամ ուրիշ ո՞րը» (191, ընդգծումը մերն է — է. Ա.)։ Դուրս է գալիս որ Ա. «առաջին օր» ասելով պետք է նկատի ունենալ առաջին տարին (օր ասելով՝ տարի՝ նկատի ունենալ), այն էլ՝ թվականի առաջին տարին։ Ենթադրենք, թե նկատի է ունեցվել 450 թվականը, իսկ ինչպե՞ս որոշենք, թե 450 թվականի առաջին տարին որն է. չէ՞ որ 450 թվականը միայն մեկ տարի է։ Բ. «Աւուր առաջնոյ» ասելով ո՞ր թվականի առաջին տարին է նկատի ունեցվել՝ հռոմեական հունվարը, եգիպտական թո՞վթը, անտիոքյան դիո՞սը, հայկական նավասարդը կամ ուրիշ ո՞րը» (191)։ Ըստ Աբրահամյանի, ուրեմն, «առաջին օր» ասելով պետք է նկատի ունենալ առաջին տարի, այն էլ՝ որևէ թվականի առաջին տարի, իսկ դրանից հետո էլ՝ թվականի առաջին տարին նկատի ունենալով, պետք է որոշել, թե դա հունվար է, թո՞վթ, դիո՞ս, նավասարդ, թե մի ուրիշ բան։ Ասենք թե մենք նկատի ենք ունեցել կամ Անդրեասն է նկատի ունեցել հռոմեական հուլյան տոմարի առաջին տարին կամ 500-րդ տարին. դա կդառնա հունվար։ Առաջին տարին մեկ տարի է, որ ունի 12 ամիս, իսկ հունվարը մեկ ամիս է։

Ա. Աբրահամյանն մի ամբողջ էջ հատկացնում է Անդրեասի տեքստի «տարվա առաջին ամսվա 14-րդ օրը» մեկնաբանելուն և դրա համար նախ ընթերցողին հայտնում է, թե ինչ է ասել և հանձնարարել Մովսեսը Ահարոնին, ապա բերում Աստվածաշնչից համապատասխան հատվածը, այնուհետև նշում, որ Անդրեասն էլ խոսում է այն մասին, թե ինչ է հանձնարարել աստված Մովսեսին և Ահարոնին և այլն, և այլն։ Վերջացնելով իր խոսքը նա անցնում է այն հարցին, թե ինչ են ասել հայ տոմարագետները այս «ԴԺ-աներորդի» մասին, իրար ետևից շարելով Շիրակացու և Հովհաննես Իմաստասերի գրածների մեջբերումները, ապա դարձյալ դիմում Շիրակացուն և մեջ բերում նրա՝ լուսնի 19-ամյա պարբերաշրջանի մեջ լուսնի լրումների ամսաթվերը՝ հռոմեական մարտ կամ ապրիլ և եբրայական նիսան ամսվա գուգորդությունը։ Նա այդ արել է ասելու համար ընդամենը մի հանրահայտ ճշմարտություն, այն է՝ Անդրեասի տեքստում հիշատակված «տարվա առաջին ամիսը» հրեական նիսան ամիսն է, դրա առաջին օրը՝ նորալուսնի օրը, իսկ 14-րդ օրը՝ հնում ընդունված լուսնի լրումի օրը, որ է «Քրիստոսի շարժարանաց օրը»։ Ընթերցողին կրկին հիշեցնենք, որ մենք պրբում չենք զբաղ-

վել զատկի տոներին հարցերով: Մեր խնդիրն է եղել պարզել, թե՞ եթե Անդրեասի ասած «տարվա առաջին ամսվա առաջին օրն» է եղել մարտի 19-ը, ապա հոռմեական տոմարով ե՞րբ կլինի այդ առաջին ամսվա 14-ը: Պատասխանն է՝ ապրիլի 1-ը: Այս է մեզ հետաքրքրել, որովհետև դրանով էլ պարզվում է, որ թարգմանչի հիշատակած արեգ-ները իր ժամանակի համար պետք է համընկնեին մարտի 20-ին (գիշերահավասարի օրվան) և ապրիլի 1-ին:

«Դժ-աներորդից» հետո Աբրահամյանն անցնում է մեր մյուս հիմնական տվյալին՝ «Թժ-աներորդին», փորձելով ցույց տալ, որ դա էլ լուսնի 19-ամյա պարբերաշրջանն է: Աբրահամյանը գրում է. «Է. Աղայանի տոմարական հաշվումների երկրորդ հիմնադրույթը ևս, ինչպես տեսնում ենք, ճիշտ չէ: Լուսնի 19-ամյա պարբերաշրջանը շփոթված է ամսաթվի հետ» (193): Շփոթում, իհարկե, կա, բայց այդ շփոթումը մեզ մոտ չէ: Բերենք Անդրեասի տեքստի այդ փոքրիկ հատվածը. «Եւ քանզի սկիզբն ամենայն տարւոյն յԹժ-աներորդի մարտի ամսոյ լինի, այսինքն է մեհեկանի, յայտ է թէ նա է ամիսն առաջին»⁵: Տեքստում գրված է մարտի 19-ին, և այդ մարտի 19-ը չի կարող լինել լուսնի 19-ամյա պարբերաշրջան:

Ա. Աբրահամյանը «Դժ-աներորդին» ու «Թժ-աներորդին» վերաբերող ուրիշ խնդիրներ էլ է առաջադրում.

«Այդ ի՞նչ փոփոխվող «չորեքտասաներորդ» է,— գրում է նա,— որ մեկ մարտ ամսին է հանդիպում, մեկ էլ՝ ապրիլին, իսկ է. Աղայանն այն անշարժ է դարձրել՝ կապելով մարտի 14-ի հետ» (191): Բերենք ևս մի քաղվածք, որտեղ կա հենց իր հերքումը. «Փակագծի մեջ վերցված թվանշաններից մարտի 19-ը է. Աղայանի կարծիքով «Թժ-աներորդն» է, որին գումարելով 13 թիվը, ունենում է ապրիլի 1-ը: ... Բայց 19-ին գումարելով 14, ապրիլի 1 չի ստանա» (189):

Ինչպես տեսնում ենք, Ա. Աբրահամյանը ընդունում է, որ մարտի 19-ը տարվա առաջին օր համարելով ըստ Անդրեասի տեքստի, 14-րդ օրը հաշվել ենք ապրիլի 1-ը և ոչ թե մարտի 14-ը: Բայց այս դեպքում նրան հարկավոր է եղել մարտի 14 դրել և գրել է. «Պարզվում է, որ է. Աղայանի կողմից ամսաթիվ ընդունված «Դժ-աներորդը»,— շարունակում է Աբրահամյանը,— ոչ այլ ինչ է, եթե ոչ լուսնի 19-ամյա պարբերաշրջանի նախազատկական առաջին լրումը, որը եբրայական տոմարով համարվում է նրանց առաջին սմսվա՝ նիսանի 14-ը» (191): Բայց «Դժ-աներորդը» մենք չենք ամսաթիվ համարել, այլ այդպես գրված է Անդրեասի հայերեն թարգմանության մեջ. «Քրիստոս ի Դժ-աներորդում աուր ամսոյն առաջնոյ չարչարեցավ», որ թարգմանվում է՝ «Քրիստոսը առաջին ամսվա 14-րդ օրը շարչարվեց»: Ամսվա 14-րդ օրը ամսաթիվ չէ՞: Հիմա վերլուծենք նրա գրածը. «Դժ-աներորդը ոչ այլ ինչ է, եթե ոչ լուսնի 19-ամյա պարբերաշրջանի նախազատկական առաջին լրումը»: Լուսնի 19-ամյա պարբերաշրջանը 19 տարիների ամբողջությունն է, 19-ամյա ժամանակաշրջանը, որ աստղագիտության մեջ կոչվում է «Մետոնի ցիկլ»: Հասկանալի է, որ 19-ամյա պարբերաշրջանը չի կարող ունենալ լրում (թեկուզ և լուսնի լրում, այն էլ՝ նախազատկական լրում, որ ըստ Աբրահամյանի «Դժ-աներորդն» է): Լուսնի լրումը լուսնի

⁵ ՔՏՊ, էջ 78:

շորս փուլերից (նորալուսին, առաջին քառորդ, լիալուսին, վերջին կամ շոր-
րորդ քառորդ) մեկն է՝ լիալուսինը, որ լինում է լուսնային ամսի 15-ին:
Անդրեասի հիշած ԴԺ-աներորդը պարզապես զարնանային նորալուսնի 14-րդ
օրն է կամ, ինչպես նույն տեքստում ասվում է, ուղղակի լուսնի 14-ը, որ
«Քրիստոսի շարժարանաց օրն» է համարվել, ըստ որում այդ 14-րդ օրը կա-
րող է լինել մարտի 21-ին, 25-ին, 27-ին, ... ապրիլի 1-ին, 2-ին, ... 22-ին
և այլն, համապատասխանորեն՝ երբայական նիսանի 4-ին, 5-ին, 6-ին,
11-ին, 12-ին...:

Մենք այլևս չենք ուզում շարունակել Ա. Աբրահամյանի կողմից մեղ
վերագրված «սխալներին», իրականում խեղաթյուրումների ու թյուրիմացու-
թյունների բացահայտումը, որ կպահանջեր բազմաթիվ էջեր: Ուստի և բավա-
կանանում ենք հետևյալն ասելով: Անդրեասի հայերեն թարգմանություն մեջ
կան հետևյալ երկու տվյալները.

1. «Եւ արդ՝ հասարակած տուրնջեան և գիշերոյ սկիզբն է տարւոյն և
ամսեանն առաջին» (ԲՏՊ, 77): 2. «Արդ սկիզբն հասարակելոյ տուրնջեան և
գիշերոյ ըստ թուոյ եգիպտացւոցն ի Ի և ի Դ ամսոյն լինի, որ անուանեալ կոշի
պեմենովթ...» (ԲՏՊ, 78): Առաջինում ասվում է, թե գիշերահավասարի օրը և
նիսանի (ամսեանն առաջինոյ) առաջին օրը նույնն են. իրոք, 353 թ. (Անդրեասի
տոնացույցի առաջին տարին) նորալուսինը, հետևաբար նաև նիսանի մեկը,
եղել է մարտի 21-ին, գիշերահավասարն էլ, ըստ նիկիայի ժողովի որոշման,
ընդունվել է դարձյալ մարտի 21-ը: Երկուսի համընկնումը պատմական իրո-
ղություն է: Երկրորդ հատվածում ասվում է, թե գիշերահավասարը լինում է
պեմենովթի 24-ին, որ է մարտի 20-ը: Մեկ հնդինակը երկու իրար հաջորդող
պարբերությունների մեջ չէր կարող հակասական տվյալներ դրել: Ուստի և՛
եթե առաջին հատվածը Անդրեասինն է, իսկ դա կասկածի տակ չի առնում Ա.
Աբրահամյանը (մենք նույնպես), ապա երկրորդը Անդրեասի գրածը չէ, այլ հայ
հնդինակի (թարգմանչի): Սա հաստատվում է նաև նրանով, որ մարտի 20-ը
որպես գիշերահավասարի կայուն օր է ընդունվել հայերի կողմից: Այս, ինչ-
պես և շատ ուրիշ տվյալներ հանգամանորեն քննության են առնվել մեր մի
ուսումնասիրության մեջ⁶, որտեղ և ապացուցված է, որ Ա. Աբրահամյանի
վարկածը՝ Անդրեասի տոնացույցի իբրև թե IV դարում թարգմանված լինելու
մասին, ընդունելի չէ:

⁶ Է. Աղայան, Անդրեաս Բյուզանդացու երկուհարյուրամյա տոնացույցը և նրա հա-
յերեն թարգմանությունը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1979, № 2, էջ 122—139: